



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Պատոմական օրեր է ապրում Ս. էջմիա-
ծինը: Իր ամբողջ անցյալում Մայր Աթոռը
չի ունեցել այն շուքն ու վեհությունը,
ինչ որ այսօր:

Հայաստանյայց եկեղեցին հրճվանքի
ու ցնծության մեջ է:

Աշխարհի չորս կողմից ժամանել են նրա
սիրասուն զավակները նրա դարավոր ճա-
կատը նոր հմայնքների ու հաղթանակների
փառքով պասկելու:

Մի պահ... և վանքի գավիթը աղմկում
է ավտոների ճոնչքունից:

Պատղամավորները և նրանց հետ եկած
հյուրերը ցած են իջնում և շրջապատված
ժողովրդով մտնում են Մայր տաճար:

Ս. պատարագի հանդիսավորությունը
հյուրերի ներկայությամբ մի նոր վեհու-
թյուն է ստանում:

Հանդիսավոր քայլերով տաճար են մըր-
նում հոգևորական պատղամավորները,
նրանց զետեռում են աշխարհականները:

Ս. Երրուսաղեմի պատրիարք հոր՝ Կյու-
րիկ Բ.-ի և Եղիկոսոսի առաջնորդ Մամրե-
և կողմանուի առաջնորդությամբ մոտենա-
լով իջնան սեղանին երկրուգածությամբ և
կարուսով համբուրում են այն, ծնրադրում
և մեկ առ մեկ իրենց տեղերը բռնում Մայր
Աթոռի միաբանության շարքերում:

Նրանց օրինակին են հետեւում աշխարհա-
կան պատղամավորները և կանգնում իջ-
նան սեղանի աջակողմյան դասում:

Չէ՞ որ հավատացյալ հայության ներկա-
յացուցիչներն են խմբված այնտեղ, միա-
սիրտ և միակամ, խոհուն և համարձակ:

Տաճարը առանձին վեհություն է սոտ-
նում և Ս. պատարագի հանդիսավորու-
թյունը ևս առաջնել տպավորիչ և անմոռա-
նալի դառնում է:

Ս. պատարագն ավարտվում է: Մայր Ա-
թոռի միաբանությունը Ամենային Հայոց
Աղղընտիր Տեղակալ Ամենապատիվ Տեր Գե-
ղորդ Արքեպիսկոպոս Զերոբքչյանի դիմա-
փորությամբ հյուրերին առաջնորդում է
գեղի վեհարան:

Դահլիճում հոգեսոր հայրերն ըստ ավա-
գության բանում են իրենց տեղերը: աշ-
խարհական պատղամավորները և հյուրերը
բռնում են դահլիճի երկու կողմերը:

Մի պահ տիրում է հանդիսավոր լուս-
թյունը: Տեղի է ունենում անխոս հայցք-
ների հուղիչ և անմոռանալի փոխանակու-
թյուն:

Կարծեք թե ոչ ոք սիրտ չի անում խը-
զել կարուսների, հիացմունքների և փոխա-
գարձ սիրո վեհափոր լուսությունը:

Եղ ոչ ոք սիրտ չի անում խզել լուսությու-
նը:

Վերջապես ոտքի է կանդնում Երուսաղե-
մի ամենապատիվ պատրիարք Հայր Տեր
Կյուրեղ Բ.-ը: Մոտենալով Ամենապատիվ
Աղղընտիր Տեղակալին, նա երկյուղածու-
թյամբ համբուրում է Տ. Տեղակալի աջը
և պահ զգացված արտասանում:

«Ամենապատիվ Հայր».

Մենք երջանիկ ենք, որ այսօր գտնվում
ենք Ս. էջմիածնում, Մայր Աթոռում: Մեզ
այսակ է բերել մեր հայրենիքի սերը, մեր
ժողովրդի կարուտ: Լցված այն գետակցու-
թյամբ, որ գեղի հայրենիքն ու ժողովուր-
դը, դեպի Ս. էջմիածնին ու Սուրբ Աթոռը
լուրջ պարտավորություններ ունենք կա-
տարելու, մենք ահա եկած ենք մեր պարտ-
քը տալու մեր սրբազն Հայրենիքին, մեր
եկեղեցուն և մեր ժողովրդին:

«Լիահույս եմ և հավատացած, որ մեր
պարտքը մենք կկատարենք լիակատար կեր-

սով և այլպիսով մեր լումա կավելացնենք մեր աղջային դանձարանում:

«Հազարդում եմ Սրբազն Տեղակալին, Մայր Աթոռի միաբանությանը, Մայր Հայրենիքին և մեր ժողովրդին Ս. Երևանի միաբանության հավատարմական հարգանքը և սերը:

«Պատիվ ունեմ Հայունելու Ձեզ իմ իմ միաբանության և ժողովրդյան անփերապահ հարգանքն ու սերը հանդեպ մեր Հայրենիքի ժողովրդանմեր պետության և ժողովրդին, որ անօրինակ աշխատանքով և մեծ դժուարեցությամբ ու ավյունով կրցածն սկզբանքել մեր սիրուն Հայրենիքը:

զործ ու Հանձարեղ աշխատանքի մեջ եղավ նաև ակն ու աղբյուրը մեր Հայրենյաց երջանկության: Պատիվ ու Հարգանք իր անունին, իր անզուգական Հանձարին և իր բարյացակամ ու Հայրական սրտին»:

Ծափահարության որոտի տակ ամենապատիվ պատրիարք Հայրը անցնում է իր տեղը:

Խոսք է առնում Բուլղարիայի Հայերի թեմական առաջնորդ բարձրապատիվ Գրիգոր ծ. վարդապետ Կարապետյանը: Այսուս է սկսում իր ողջույնը Հայր Գրիգորը:

«Ձերդ սիմենտպատվություն, արտասահմանյան թեմերու կարգին՝ Բուլղարիու



Եղիսկոպոսական ժողովը վեհաբանում

քաղաքակրթության ամեն բարիքներով և աղահովել անոր ապագա վերելքն ու Հառաջաղիմությունը կյանքի բոլոր մարդերու մեջ:

«Մենք հպարտ ենք մեր պետությամբ և վստահ ենք, որ ոչ միայն մեր, այլև Սովետական Միության պատմության մեջ սպակի տառերով պիտի արձանագրելի անոր հրաշակերության դրվածքը:

«Ամենապատիվ սրբազն Տեր, խնդրում եմ Ձեզ, որ բարեհաճեք թարգման Հանդիսանալ մեր գերազույն զգացումներուն Սովետական Միության Գերադույն Պետին և Մեծ Առաջնորդին՝ Ի. Վ. Ստալինին, որ իր մարգկության աղատակրության մեծա-

Ձեր հայ զավակներն ևս իրենց պաշտոնական մարմիններով անպատում բերկրանքի մեջ են այն օրեն, եթե Սփյուռքի Հայությունը բախտ ունեցավ ընդունելու Ազգիս ընդհանրական Հայրապետության սրբազն Տեղակալ Հորդ ավետարեր շրջաբերական հետապերները, որով հՀաղորդվելի 1945-ի գարնան դուռարելի Սպղային-եկեղեցական ժողովի թվականը:

«Սովետական Միության մեծ բնտանիքին իր անդամ, աննախընթաց շինարարությամբ և մշակույթային հսկա առաջադիմությամբ, աղքան ամբողջականության իրական պարծանք Հանդիսացող մեր սիրելի Հայրենիքին մեջ, ուշ գտնվելու բախտն

ունինք ներկայիս, Հայաստանյաց եկեղեցին վերանորոգության և յոթը տարիների է վեր հայրապետական դաշկուլ սուզել քողին վերացման համար այս Հաջուռությունը Զեղ կպարտինք, Սրբազն Հայր:

«Տիեզերասասան պատերազմին փառավոր վախճանը՝ չնորհիվ Սովետական Միության դերանձար զեկավար Ի. Վ. Ստալինի և անզարտելի Կարմիր Բանակին, կրանա վերածնունդի նոր շրջան մը Ս. էջմիածնի համար, որ հավատանք թե չուտով պիտի դառնա իր նախկին փառքին Զեր Ամենապատիվ Սրբազնության անժրիտելի և բաղմազիսի կարողություններով և իմաստուն Հովվապետի արժանիքներով, զորս Հայանաբերեցիք ամեն ատեն և ամեն տեղ:

«Ամեր որդիական չնորհավորությունները խոնարհաբար կմասուցանենք Զերդ բարձր Արբազնության այն ժեծ Հաջողություններուն համար, որոնք հրճվանքով կպարունակությունը ամեն ամենուն սիրտը:

«Կներկայացնենք մեր դադութի Հայության հավատարմական զգացմունքները Սովետական Միության և իր Հանձարեղ Առաջնորդին, Հայաստանի բարեխնամ կառավարության և Մայր Աթոռ Ս. էջմիածնին» :

Մափահարությունների փլացուցիչ որոտը մեղմանում է այն ժամանակ միայն, երբ ոտքի է կանգնում հաջորդ ճառախոռն Ռումինիայի հայերի առաջնորդական տեղապահ Տ. Վաղեն վարդապետ Պալճյանը: Գեղեցկաղեմ, Երիտասարդ վարդապետը Հանդիստ տոնով, բայց ուժեղ առաջանաւթյամբ սկսում է իր ճառը.

«Ամենապատիվ Սրբազն Հայր, խոնարհաբար կներկայացնեմ Ռումինիայ թեմը և մեր բոլոր հավատացալներու կողմեն կուլամ ողջունելու Ս. էջմիածնինը և համբուրելու Զերդ Ամենապատվության Ս. Աջը:

«Վաստահ մղեք, թե ամրող սումանահայ դադութիւնը բոցավառված է ամենապիսի սիրով և խանդակառությամբ Հանդեպ մեր Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի և Ս. էջմիածնի:

«Բովանդակ դադութամբ այս առաջնության կենտրոնը այս սուրբ վայրերն են: Սովետական բարեխնամ և Հոգոր կառավարության բարյացակամաւթյան և օժանդակության չնորհիվ, ինչպես նաև Զերդ Ամենապատվության խմաստուն և Հայրենասուրբ գործունեությամբ Հայաստանյաց եկեղե-

ցին կմտնե իր դերին մեջ՝ շարունակելու համար իր պատմական առաքելությունը մեր ժողովրդի կյանքի բարդացանցման և մեր Սովետական Հայրենիքի վերաշնուրացանը վերաբերյան վսեմ գործին մեջ:

«Այս ճամբուն վրա ուռմինայությունը Զեղ կհետեւ ամենայն նվիրումով և վաստիանությամբ:

«Թող օրհնյալ ըլլա այս պատմական որբը:

Խոսք է խնդրում Սրբազնականի փոխթեմակալ Տեր Կարապետ քահանա Մանուկյանը.

«Զերդ ամենապատվություն, Առարատականի հայ ժողովրդի ներկայացուցչական թեմական ժողովի և նրա ծերունագարդ և բազմաշխատ առաջնորդ գերաշնորհ Տեր Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանդյանի կողմից իմ խորին չնորհակալությունն եմ Հայունում Զերդ սրբազնության Զես այն ջանքերի առթիվ, որով մենք ամենայն հանգստությամբ ճանապարհորդեցինք և հասանք Մայր Աթոռ:

«Առ այդ, Սրբազն Հայր, խնդրում եմ առաջնորդի և ինձ ընտրող թեմ: Ժողովի կողմից մեր կրամտագնաությունը և մեր Հարզանքների խորին համաստիքը Հայուններ մեր կառավարության, ինչ ձեռվ որ Դուք Հարմար կպանեք:

«Բնդ սմին Զեղ եմ Հանձնում Հոչակովուր Տաթինի մենաստանի Ս. Գրիգոր Տաթևացու սոկեկաղմ ձեռապիր ավետարանը, որ մատ 150 տարիա ղամամություն ունի»:

Խոսք է խնդրում Իրանա-Հնդկական թեմի առաջնորդ Տ. Վահան ծ. Վրդ. Կոստանյանը:

«Ամենապատիվ Սրբազն Հայր, Զերդ բարձր կարգադրությամբ ս. թ. Հովհաննես 24-ին մեկնեցի իմ պաշտոնավայրը՝ նոր Զուղա, որտես Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդ: Այս թեմի Հայությունը, որ Շահարասի ձեռքով փոխադրվել է 340 տարի առաջ Իրան, պահել է իր աղքաքին բոլոր արագեցիներն ու սպառությունները և կառչած է իր եկեղեցուն: Զուղան ունի 12 եկեղեցի և մատուռ, բոլորն ել բարեկարգ ու պայծառ վիճակում: Իրանա-Հնդկաստանի և թեհրանի Հայությունը անվե-

բարահարեն կապված է Մայր Հայրենիքի, Ա. Եջմիածնի և նրա սրբությունների հետ: Նա սիրում է իր Հայրենիքն ու տեսչում է տեսնել Մայր Աթոռը, Աւանն ու Գեղարդը, Մայր Արաքսն ու Հրազդանը, ալեւը Մասիսն ու Արագածը:

«Իբանա-Զնդկաստանի և Թեհրանի թեմերի տարագիր Հայ ժողովուրդը ինձ Հանձնարարեց Համբուրել Ձերդ առնապատճության Ա. Աջը և Հայցել Ձեր օրհնությանը: Իբանա-Զնդկաստանի թեմի կողմից Ձեզ բերել եմ 10.000 թուման արժողությամբ մի արծաթյա և սակա սկսած շեղ, Թեհրանի թեմից՝ 10.000 թումանանոց մի ընտիր պարսկական զարդ, իսկ Ռուման Բողոքանոցից Իսույցելի կողմից մի յափառույն ամերիկյան ավտոմեքենա՝ Ձեր երթեկության համար:

«Սրբազն Հայր, Հածեցեք ընդունել այդ նվերները: Խնդրում եմ օրհնեցեք Ձեր և Մայր Աթոռի տարագիր, սակայն ազնիվ Հայ ժողովրդին, որ հոգով ու որտով և զգացումներով Ձեզ հետ է»:

Այսուհետեւ ողջույնի խոսքեր ուղղերավ Տ. Տեղակալին արտահայտվում են դրեթե բոլոր պատղամալորները: Նրանց ճառերը Հաղեցված են Նվիրվածության և անկեղծության զգացումներով: Լինելով Հարազատ թարգմանը իրենց ընտրող ժողովրդի՝ նրանք հաճախ պատմում են ինչտար բնորոշ:

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԴԱՐԵԳԻՆ Ա-Ի ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Երեկոյան ժամը 8-ին ժամանում է Տանն Կիլիկիոն վեհափառ կաթողիկոս Գարեգին Առաջինը:

Վեհափառը աղմէկալից կեցցեներով առաջնորդվում է դեպի Մայր տաճարը: Թափորի առաջից փողիուղում են խաչվառներն ու խաչերը և «Հրաշտիառ» շարականով կաթողիկոսը միարանության առաջնորդությամբ մտնում է տաճար:

Նա հակիրծ ու ամփոփի կերպով խոսում է առաջիկա Աղքային և կեղեցվական ժողովի պատմական նշանակության մասին, կոչ և անում սիրել Մայր Աթոռն ու Հայրենիքը, սիրել և ամուր փարսիլ մեր պետականությանը, նվիրվել նրանց ստեղծագործ աշխատանքներին և բարձր պահել Հայ ժողովրդի Աղքային Պետական և կրոնական միասնության դրոշները:

Դուքս զալով Մայր Տաճարից վեհափառը քայլերն ուղղում է դեպի վեհաբան: Ճա-

մանրամասնություններ՝ վեր հանելով Հայ ժողովրդի սերը գեպի Մայր Աթոռ Սուրբ Եջմիածնին և դեպի Աղքային Տեղակալը:

Վերջապես ողջումողներին պատուսիանում է Տ. Տեղակալը: Սրբազն Հովապետին հուղել են իր զավակների սրտաբուխ դպացումները: Նրա աչքերը արտահայտում են ինպությունն, և նրա սիրութ բարախում է ցնծությամբ: Ողջունելով պատղամավորներին և բարի զարւատ մաղթելով՝ Տեղակալը նշում է մեր պետականության Հանգամանքը, շեշտում է, որ այսօրվա հավաքութիւն և այս Համազգային ցնծության համար Հայ ժողովրդը պարտական է Մեծ Ստալինին և ուստի մեծ ժողովրդին: Դաշլիճը զդրում է ծափահարությունների որարից:

— Մեեք մեր աշխատանքներով, մեր նվիրվածությամբ, նյութական և բարոյական աջակցությամբ հանդեպ Սովետական Միուրյան և Սովետական Հայաստանի կառավարության, պիտի պապացւցենք, որ ինքանի մեեք արժանի ենք այն մեծ ուշադրությանը, որ ցուցաբերվեց դեպի մեզ:

«Ողջունում եմ Ձեզ և օրինում գործն ու աշխատանքները» խոսքերով վերջացնում է իր ողջույնի խոսքը Տեղ Տեղակալը:

Պատուամավորները ուրախ և անջնջելի տպավորություններով թողնում են զավեճը:

Հասպահակությունները բռնել են Հավատացյաները, որոնք կեցցեներով ողջունում են նրան:

Հուզիչ է աեսարանը վեհաբանում: Հայ Եկեղեցու երկու վետերանները գրկախառնը վում են և Համբուրվում, Սրբազն Տեղակալը իր աթոռն առաջարկում է կաթողիկոսին և անդ բանում նրա աջակողմում, ձախ կողքին բարձրում է Երուսաղեմի պատրիարքը, մյուսները կանգնում են ըստ ամադության:

Կաթողիկասը ձեռքի շարժումով ազդարաբում է նստել:

Սկսվում է խիստ մտերմական, ընտանեկան դրույցը: Նա պատմում է ճանապարհին վայելած սովետական օրդանների հյուրասիրության և իրեն ցույց տրված օժանդակությունների մասին: Ծիծալը անպակաս է նրա դեմքից, նա անչափ զո՞ւ է իրեն ըրջապատող իրազրությունից:

— Ճեմարանի համար արժեքավոր նվեր
է և ճեմ բերել, — Հայտարարում է վեհափա-
ռը՝ տարեկան 50 Գունա ստերլինգ ապա-
չովել. եմ ճեմարանի համար, այս տարվա-
նը բերել եմ, զբանաւում է, ուզում եք
հանեմ, դեմք սեղանի վրա, — ասում է նա
և լիաշունչ ու կուշտ ծիծաղում:

Նրա կենաւլց ծիծաղի մեջ Հայրենիքն է
խոսում, Մայր Աթոռու և Ս. Էջմիածնի կա-
րուտն է, որ վեհափառ շքեղությամբ լըց-
նում է Հսկայական դահլիճը:

Պատղամավորները ցնծաղին ծափահա-
րում են, նրա հայտարարությունը վարա-
կում է ամենքին, «Կվերադառնանք, մենք
էլ կուղարկենք», լսում է կողքերից. «Ե՞լ
գործնական մարդ, ինչպես երկում է, չի
սիրում խոստումներ և ապառիկ դորձեր»,
լսում է ետևից: Շուռ ևմ զալիս վերջին
արտահայտություն անողին գտնելու, տես-
նում եմ բոլորն ուրախ են, ժամաներս,
կայտառ, բոլորի ուշագրությունն ու նայ-
վածքները նվիրված են դեպի վեհափառը:

Առանձնապես նկատելի է երկու ականա-
վոր եկեղեցականների փայփայանքը և
խիստ սիրալիքը, շերմ վերաբերումքը մի-
մանց: Եվ այդ հսկանալի է. նրանք ճե-
մարանի առաջին շրջանավարտներն են,
դասընկերներ և ճեմարանավարտ առաջին
եկեղեցականները: Տարիների ո՞րպիսի վսեմ
պատմություն է կապված կյանքի հետ,
մեկը Տան կիլմիկո կաթողիկոս, իսկ մյու-
ալ՝ Ամենայն Հայոց Հայրապետության
Տեղակալ: Ու որքան խորհրդավոր, իմաս-
տալից ու գեղեցիկ է պատմական այս դու-
գադիպությունը:

Մեկ ընդ մեջ Գարեգին Արքին վեհափառը
Հայացքը արտասահմանից եկած հոգեորա-
կաններին ուղղելով՝ պատմում է այնտեղի
անցուղարձերից, ինչ որ հիշեցումներ ա-
նում, կամ Հարցումներ տալիս: Զրուցի
Հանդիսավորությունն ու քաղցրությունը
թույլ չեն տալիս միջամտել և Հարցա-
դրումներ անել: Սակայն վերին աստիճանի
կենսուրախ և պարզ այդ անձնավորություն-
նը ամեն անգամ դոհունակությամբ շփում
է իր ճեռքերը և հիշեցնում Արդային-եկեղե-
ցական միասնության դադափարը: Արդա-
յին-եկեղեցական միասնություն, — ահա

մեր երկու ականավոր եկեղեցականների
էլությունը, նրանց նկարագլիքը:

Նույնպիսի մտերմական խոսակցություն-
ներ և մտքերի փոխանակություն տեղի է
ունենում Երուսաղեմի պատրիարք Հոռ
կյուրեղ Բ-ի հետ: Պատրիարք Հայրը խո-
չուն մի անձնավորություն է, նրա մտքե-
րը չափված և ձևաված են, թվում է, թե
նա վարդօրոք խորհել է այն բոլորը, ինչ որ
այսօր արտահայտում է: Նրա արտաքին
հղությունը և մտքերի պարզ շարահարու-
թյունն ու խորությունը անզգութական ամ-
բողջությունն են կազմում: Նա պակամորիչ
է և լուրջ խոսում է համոզիչ լեզվով:

— Շատ բան կապարտենք Սրբադան Տե-
ղակալին, աս օրերը պատմական են ու հա-
վերժական: Սովետները փրկեցին հայ ժո-
ղովուրդն ու հայ պատմությունը, հա-
ճախի կրկնում է նա: Այս հակիրճ նախա-
պատությունների մեջ ամբողջ դարեր են
պատկերում, ամբողջ պատմություններ
ապրում:

Արտասահմանի հայ պատգամավորները
առանձին զոհունակությամբ նշան են մեր
գեսպանների ցույց տված աշակցությունը
եկողներին: Հիրավի, պատգամավորի դիր-
քըն ու պատիվը առանձնահատուկ հար-
գանքի է արժանացել մեր պետության կող-
մից:

«Եվրոպական և ոչ մեկ պետություն դեռ
ևս չի հասեր նման նրազգացության
պատգամավորին արժանապատվության
հանդեպ», բացականչում է մեկը՝ խիստ
տեղին շեշտելով Սովետական երկրի առա-
վելությունը:

— Ուշ է, վեհափառը պիտի հանգստա-
նա, — Հայտարարում է Ամենապատիվ Տ.
Տեղակալը:

— Հանդասանալու չեմ եկել, — ընդմի-
ջում է վեհափառը և զրուցյը շարունակում:
Կարուի և սիրո տեխչը հորդում է նրա
արմագից: Բայրոս հեղեղվաւ ենք և վարակ-
վաւ նրանով, նրա զգացումներով ու
մտքերով...

Հուշերի, քաղցր դրույցների անմոռանա-
մի երեկո, որ միշտ կապրի բոլորին սրտում
մեղ տանելով աղքային միասնության ուր-
բաղան, ճամբաներով:

Բ. Վ.